

ծէսի այս կամ այն փուլն ու նրան վերաբերող իրողութիւնները:

Աշխատանքային գործունէութեան, զբաղմունքների վերաբերեալ նիւթերը գրի են առնուած գերազանցապէս Դիզակից ու Խաչէնից: Մասնաւորապէս՝ Դիզակից 1889 թ. արժէքաւոր տեղեկութիւններ են հաւաքուել երկրագործական աշխատանքների (հացահատիկների մշակման, այգեգործութեան, գինեգործութեան, շերամապահութեան) ու արհեստների (դարբնութիւն, նուագածուներ, երաժշտական գործիքներ, որսորդութիւն) եւ այլնի վերաբերեալ²³: Ըստ որում տեղեկութիւններ են հաղորդուում գործիքների, բոյսերի, կենդանիների, հագուստի, ուտեստի, փոխօգնութեան ձեւերի, աշխատանքային գործունէութեանն առնչուող սովորութիւնների մասին՝ բարբառային բառերի բացատրութեամբ հանդերձ: Վար ու վարի տեսակներ՝ ըշուկաձուլար, կեարունքաձուլար, ցանքս քաղհան. հունձ ու հնձի հետ առնչուող չափեր՝ չանկ, կիւտակ, խորթնը, փենջակ եւ այլն: Դիզակում երկուշաբթի օրը վար չեն անում: Վարը սկսելու առաջին օրը կորկոտ են ուտում, նախքան սերմը հողին պահ տալը հետը «ճողպուր» ընկոյզ են խառնում եւ այլն²⁴: Արժէքաւոր տեղեկութիւններ կան Դաղեանի ձեռագրերում արցախահայոց բնակելի տան՝ դարադամի շինարարութեան վերաբերեալ (տան, գիւղի հիմնադրման համար տեղի ընտրութեան, շինարարութեան համար գործածուող նիւթերից պատրաստուած տան մասեր, դրանց անուանումներ, տան առանձին յարկաբաժիններ, դրանց նշանակութիւնն ու անուանումները, համայնքի մասնակցութիւնը շինարարութեանը, դրա հետ կապուած սովորութիւնները):

Դաղեանն անձամբ եւ ուրիշների միջոցով նիւթեր է հաւաքել կախարդու-

թեան ու գուշակութեան ձեւերի, կախարդների ու գուշակների մասին: Ըստ նրա գրառումների՝ Արցախում գործադրուել են գուշակութեան հետեւեալ ձեւերը՝ «կոռնը չափել», «վախը էր քաղիլ», «սրտամնայ պոնել», «ջամի մէջ ջուր լցնել» եւ այլն: Նա կազմել է Շուշի քաղաքի եւ այլ բնակավայրերի հայ եւ այլազգի «փալչիների», «չոփչիների», հեքիմների, սուրբ համարուող «օճախների» ցուցակներ²⁵:

Ժողովրդագիտական որոշակի արժէք ունեն Դաղեանի հաւաքած ու գրի առած ժողովրդական բժշկութեան վերաբերեալ նիւթերը, որոնցում տեղեկութիւններ կան բուժման թէ՛ ֆիզիկական, թէ՛ կախարդական-հմայական եղանակների մասին (բուժում օձի կծածից, գլխացաւի ժամանակ արիւն առնել, մահլամներ պատրաստել եւ այլն)²⁶: Անուրանալի հետաքրքրութիւն է ներկայացնում «Անանուն բժշկարան ոմն իմաստասէրի» ձեռագիրը, որը կազմուած է 19-րդ դարում, շարադրանքը՝ գրաբար²⁷: Ձեռագիրը պարունակում է դեղամիջոցների պատրաստման ու գործածութեան եղանակների նկարագրութիւններ, վերջում կցուած է բառարան՝ նիւթերի հայերէն ու լատիններէն անուանումներով:

Դաղեանի հաւաքչական գործունէութեան մէջ նշանակալից է վիճակագրական, տեղագրական-աշխարհագրական նիւթերի բաժինը, որը վերաբերում է ինչպէս Արցախին, այնպէս էլ Պարսկահայքին: Բաւականաչափ տեղեկութիւններ կան Արցախի շէնքերի, բնակավայրերի, գաւառների, բնակչութեան թուի, ազգային կազմի, սրբավայրերի, եկեղեցիների, բնական միջավայրի՝ լեռների, գետերի, աղբիւրների, տարուայ եղանակների մասին: Նա կազմել է Վարանդայի ձեռագիր քարտէզը, գիւղերի ցուցակը (թուով՝ 64)՝

նշելով բնակչութեան կազմը²⁸: Իր շրջագայութիւնների ընթացքում համեմատելով հայկական եւ թուրքական գիւղերը, դրանց բնակչութեան թիւը՝ նա յանգել է այն եզրակացութեան, որ առաջինները բազմամարդ են, բաղկացած են 150, 200, 400-ի հասնող տներէց, մինչդեռ երկրորդները ղշլաղներ են՝ ձմեռանոցներ՝ 6-15, ամենաշատը 50 տնից բաղկացած²⁹: Մօտիկից իմանալով Շուշին, ուր նա ապրել է մինչեւ 1894 թ.՝ նկարագրել է քաղաքի հայկական եւ թուրքական թաղամասերը (մհալները), կազմել քաղաքում հաստատուած տոհմերի ցուցակը՝ նշելով, թէ որ տոհմը որտեղից է գաղթել եւ մի անգամ եւս հաւաստել քաղաքի հայկական լինելը: Քաղաքի ճշմարտացի պատկան լինելը շարադրելուն կարող են մոտեցնել Դաղեանի ֆոնդում պահուած Շուշի քաղաքի արհեստաւորների, գինուորականների, բժիշկների, դրողների, երգիչ-աշուղների, ուսուցիչների, նախադասների ցուցակները, ինչպէս նաեւ ղաչաղների ցուցակները, ինչպէս նաեւ 1877-1878 թթ. ուսուցիչական պատերազմի ժամանակ ուսուցիչական բանակում կամաւոր ծառայելու պայմաններին, վիճակագրական ձեռագրերի, ունեգուրկ բնակչութեանը բաժանումներին, համար կազմօգնութիւն ցոյց տալու համար կազմակերպուած հանգանակութեանը եւ նման այլ միջոցառումներին վերաբերող փաստաթղթերն ու տեղեկութիւնները³⁰:

1895 թ. «Արարատ» ամսագրի գեղատեքերեան համարում լոյս է տեսնում Խ. Դաղեանի հաւաքած աւետիսների մի փունջ՝ «Ղարաբաղի ջրօրհնաց երգերից» խորագրով, օժտուած հակիրճ ազգագրական բնոյթի տեղեկութիւններով: Աւելի վաղ «Արարատի» նոյն տարուայ N 11 եւ N 12-ում տպագրուել էր Թաղեանի առաքեալի վանքում (Պարսկադեհու առաքեալի վանքում (Պարսկահայք) Խ. Դաղեանի գրի առած հայոց ազգային հերոսավէպի մի պատումը՝

«Տղայ Դաղեանի եւ աղջիկ Խանդուկի հեքիաթը» վերնագրով, վանեցոց բարբառով, բանասէր Ն. Քարամեանի առաջառով³¹: Խ. Դաղեանը չորրորդն է մեզ շարքում (Գ. Սրուանձտեան, Մ. Աբեղեան, Գ. Յովսէփեան): Իսկ «Արարատի» 1895 թ. N 8 հրատարակուած է «Հայն ու իւր դրացի ազգերը» հաղորդումը, ուր գետեղուած են քրդերէն ու թուրքերէն բանահիւսութեան նմուշներ՝ հայերէն թարգմանութեամբ հանդերձ, գրի առնուած հայ ասացողներից: Խ. Դաղեանը եղբոր՝ Ա. Դաղեանի³² հետ տպագրում է «Վարանդայի ժողովրդական գրականութիւնից» խորագրի ներքոյ վիճակի երգերի շարքեր՝ կից ներկայացնելով բարբառային բառերի հմուտ ու հաւաստի բացատրութիւններ³³: Հրատարակիչները գրում են, որ երգերը գրի են առնուած 1890-1900 թթ.³⁴ Վարանդայի գիւղերում: Սակայն Խ. Դաղեանի ֆոնդում տուեալներ կան, որ երգերը «Գիւլում հայ», «Վիճակի երգեր» խորագրով գրի են առնուել տակաւին 1878 թ. հայրենի Թաղաձոր գիւղում:

Խ. Դաղեանի բանահիւսական-հաւաքչական գործունէութեան պատկերը թերի կը լինէր առանց նրա ձեռագիր ժողովրդականութեան: Հեքիաթներ, աւանդուածներ, գուարճախօսութիւններ, աշխատանքային, սգոյ, օրորոցային, հարսանեական, մանկական ծիսական, վիճակի երգեր, խաղերգեր, ծաղրերգեր, հաշուերգեր, գեր, խաղերգեր, կենաց-բարեմաղթութիւն-հանելուկներ, վիպական մանրներ, շուտասելուկներ, վիպական մանրներ, ստեղծագործութիւններ՝ ահա թե՛ ժանրի ստեղծագործութիւններ՝ որոնց նմուշները պահուած են նրա ֆոնդում: Ըստ որում նիւթերի զգալի արխիւում: Ըստ որում նիւթերի զգալի մասն ունեն համապատասխան ծանօթագրութիւններ տեղի, ասացողի, գրա-

ման ժամանակի եւ այլնի մասին:

Խ. Դադեանը արժէքաւոր տեղեկութիւններ է հաւաքել Արցախի, ինչպէս նաեւ պարսկահայոց ժողովրդական երգիչներին, աշուղների կենսագրութեան, ստեղծագործութիւնների մասին. աշուղներ՝ Նաբի, Բաբա (Պապէ), Լալա, Շուշի (տողցէ), Դիւշկիւն Քասպար (Թաղասեռցի), Արթիւն, Առստամ (Թաղարեցի), Զարկեար օղլի (ծաղրութեցի), Դաշխուն (Թաղարեցի), Գիւլշան (խանձաձորցի), Փստի (Թուրք), Բուշան (Թաղասեռցի)³⁵, Միսկին Տոնի (գիւլստանցի), Թաթոն (բանազուրցի), Ղըլ Թաթոս, Միքայէլ (մարաղեցի), Աղամօղլի³⁶: Դադեանը գրի է առել յիշեալ աշուղներից մի քանիսի հայտառ թուրքերէն եւ հայերէն խաղերը (Ղարաբաղի բարբառով): Նրա ֆոնդում է գտնուում Թաղարեցի աշուղ Առստամի երգերի մատեանը, որ կազմուել է 1868 թ. եւ պարունակում է մինչեւ այսօր Թաղարեցիների յիշողութեան մէջ իր երգերով, իմաստուն խօսք ու զրոյցով կենդանի աշուղի խաղերը:

Դադեանի ֆոնդում եղած ժողովրդագիտական նիւթերը դուրս են մնացել գիտական շրջանառութիւնից, իսկ հրատարակուածները մինչեւ դարիս 60-ական թուականները մնացին իբրեւ եզակի նմուշներ Արցախ ազգագրական շրջանից: Մինչդեռ այդ ձեռագիր նիւթերը շատ կողմերով լրացնում եւ ամբողջացնում են արցախահայոց նիւթական մշակոյթի պատկերը եւ վերջինիս մասին եղած գիտական պատկերացումները, կարող են ծառայել իբրեւ սկզբնաղբիւր պատմա-ազգագրական եւ, ինչու էլ, նաեւ լեզուաբանական հետազօտութիւնների համար:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Կենսագրական տուեալները քաղուած են Խ. Դադեանի ինքնակենսագրութիւնից ու ծառայողական ցուցակից, որոնք գտնուում են ՀՀ Պատմութեան պետական կենտրոնական արխիւի՝ Խ. Դադեանի ֆոնդում, հմ. 319, գգ. 179, 277, 287:
- 2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 319, գ. 239, թ. 8:
- 3 Նոյն տեղում, գգ. 223, 368, 375:
- 4 Նոյն տեղում, գ. 280, թ. 1-7:
- 5 Նոյն տեղում, գ. 285, թ. 1-4:
- 6 Նոյն տեղում, գգ. 223, 285, թ. 4, գգ. 290, 291, 376, թ. 1-2:
- 7 Նոյն տեղում, գ. 287, թթ. 1-2. Արարատ, 1900, էջ 317-320:
- 8 Համեմատութեան համար նշենք, որ Ն. Մառը Անիի պեղումների համար մինչեւ 1908 թ. ծախսել է 30.024 ռ., որից 28.081 ռ. ստացել է մասնատրուտի արտադրութեան, գլխատրապէս՝ «Արամազդ» ընկերութիւնից, որքերի վաճառքի ու դասախօսութիւնների մուտքերից: Տե՛ս ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1981, N 5, էջ 109:
- 9 Նոր-Ռար, 1902, NN 187, 188, 189, 190:
- 10 Արարատ, 1900, N 8-9, էջ 380-381. Մշակ, 1900, N 246, 1903, N 59, 1904, N 109. Մուրճ, 1901, N 7 եւ այլն:
- 11 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 319, գ. 292, թ. 2:
- 12 Վտակ, գրական-բանասիրական ժողովածու, Թիֆլիս, 1901, էջ 303-306. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 319, գ. 248, թ. 1-2:
- 13 Раскопки развалин церкви св. Григория близ Эчмиадзина (20 табл. и 7 рис.) - Известия импееаторской Археологической комиссии, вып. 7, С. Петербург, 1903, с. 1-48.
- 14 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 319, գ. 248, թ. 2. Մ. Տէր-Մովսիսեան, Էջմիածին եւ հայոց հնագոյն եկեղեցիներ, Ազգագրական հանդէս, գ. 15, էջ 85-127, գ. 16, էջ 130-204, Թիֆլիս, 1907:
- 15 Մուրճ, 1905, N 5, էջ 185-197:
- 16 Եղիշէ Մաղաթեանի եւ Գր. Խալաթեանի նամակագրութիւնից, հրատ. Գ. Մաղոյեանի, - ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1973, N 6, էջ 48:
- 17 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 319, գ. 273, թ. 1-2:
- 18 Նոյն տեղում, գ. 66, թթ. 1-17, գ. 87, թթ. 1-6, գ. 92:
- 19 Նոյն տեղում, գ. 70, թ. 82:
- 20 Նոյն տեղում, գ. 7, թթ. 31-40, գ. 87, թ. 24:
- 21 Նոյն տեղում, գ. 7, թթ. 1, 21-27:
- 22 Նոյն տեղում, գ. 14, թ. 25:
- 23 Նոյն տեղում, գ. 14, թթ. 9-15, 31-51, գ. 76, թ. 50-54, գ. 92:
- 24 Նոյն տեղում, գ. 14, թթ. 47-50, գ. 91, թթ. 16-19, գ. 92, թ. 1:
- 25 Նոյն տեղում, գ. 1, թ. 29-36, գ. 87, թ. 39, գ. 92, թ. 8:
- 26 Նոյն տեղում, գ. 25, գ. 87, թ. 39, գ. 92, թ. 9:
- 27 Նոյն տեղում, գ. 103:
- 28 Նոյն տեղում, գ. 7, թ. 1, 41, գ. 87, թթ. 7-10, 24-35, 56-65, գ. 91, թթ. 15-20, 29-60:

- 29 Նոյն տեղում, գ. 91, թ. 20:
- 30 Նոյն տեղում, գ. 1, թ. 1-28, թթ. 31-35, գ. 91, թթ. 26-28 եւ այլն:
- 31 Վէպի մի ոչ ամբողջական պատում, բաղկացած վեց թերթից, Խ. Դադեանը ի թիւ այլ միւսերի 1920 թ. դեկտեմբերին յանձնում է Լ. Լիսիցեանին ու Լ. Թահիրեանին (տե՛ս նոյն տեղում, գ. 371, թ. 4):
- 32 Արամ Դադեանը (1873-1919 թթ.) աւարտել է Գետրգեան ճեմարանը, զբաղուել է ուսուցչութեամբ: Վերջերս հանրապետական գիտա-մեթոդական կենտրոնում, բանահիւսութեան բաժ-

նում աշխատելիս մեր ձեռքն անցաւ Ա. Դադեանի «Ղարաբաղցերէն բանատր գրականութիւնից» խորագրով հեքիաթների մատեանը (212 մեծադիր էջ), բաղկացած 12 հեքիաթից, որի առնուած 1887-1910 թթ. Շուշիում, բանահաւաքի ծնողներից ու քաղաքի մեծահասակներից:

- 33 Ազգագրական հանդէս, գգ. 17, 18, 19, Թիֆլիս, 1908-1910:
- 34 Ազգագրական հանդէս, գ. 17, էջ 37-39:
- 35 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 319, գ. 8:
- 36 Նոյն տեղում, էջ 29-54: